կապես քաղաքային/ խաղալիք - արջի՝ որպես փեսայի խորհրդանիշ հանդես գալու մեջ:

Է.Կ.ԽԱՌԱՑԻԴԻՍ
ՊԼՄ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈՒՅՆԵՐԻ ՎԱՐՈՂ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԸ

1. Արևելյան Հայաստան ներգաղթելուց հետո հույները, 200 տարի հայերի հետ սերտ փոխհարաբերությունների մեջ գտնվելով, նյութական և հոգևոր մշակույթի ասպարեզում կրել են որոշակի փոխազդեցություններ: Ստորև փորձ է արվում լուսաբանելու հույների օգտագործած երկրագործական գործիքների առանձնահատկությունները, վարող գործիքների համալիրը, որը հիմնականում փոխառնված լինելով տեղի հայ բնակչությունից, նրանց արտադրական կենցաղից, իր մեջ, այնուամենայնիվ, պարունակել է հունական նույն կենցաղի տարրեր, որոնք զուգահեռաբար անվանվել են նաև հունական տերմիններով:

2. Հողամշակման գործիքների համալիրի մեջ մտել են տարբեր գործիքներ, որոնք կարելի է բաժանել երկու հիմնական խմբի՝ լծասարքի գործիքների և ձեռքի գործիքների: Լծկանով վարող հիմնական գործիքներից են արորը, որ հույները անվանել են չիֆթ, ալետր, և մեծ գութանը՝ կարակոթան, մավրոն կոթան: Չիֆթ /թուրք. cift - զույգ եզալուծ/ տերմին օգտագործել են Լոռվա հույները /Մաղան, Շամլուղ, Ցաղղան, Կողես գյուղերում/: Հանքավանում /նախկին Նովո-Միխայլովկա, Միսխանա գ./ արորը ալետր է կոչվել /հուն. τράλετρα - արոր/: Դաշտային ազգագրական նյութերը ցույց են տալիս, որ նման տերմիններով հույներն անվանում են ոչ առանձին վերցրած գործիքները, այլ տվյալ գործիքը ողջ կազմով, այսինքն՝ արորն ու զույգ անասնալուծը միասին: Շամլուղում և Մաղանում արորին լծել են ձիեր:

Հույների օգտագործած ալետրն ունեցել է արորից ավելի մեծ չափեր և կառուցվածքային որոշակի տարբերություններ: Դրան լծել են երկու կամ երեք լուծ եզ: Այն համապատասխանել է ավելի հայկական վեցկիին, չորոցին:

3. Մեծ գութանը կամ մավրոն /հուն՝ սև/, կարա /թուրք՝ սև/ կո-

թանները /զութա/յ/՝ մեծ արոր/ առանձին մասերի կառուցվածքով ու դրանց չափերով զգալիորեն տարբերվում են արորից: Հունական բնակավայրերում զութանի և հարակաշի մանրակրկիտ վերլուծությունը հանգեցնում է այն եզրակացության, որ Ցաղդան, Կողես գյուղերի հույն բնակչության մեջ մշտապես պահպանվել են համկալի / հարակաշի/ առաջին երկու զույգի անվանումները, որոնք այդ անվան մեջ միավորում են նաև զութանի հոտաղի անվանումը: Սա մի առանձնահատկություն է, որ բնորոշ է Արևելյան Հայաստանի հունական գրեթե բոլոր բնակավայրերին: Իրավիճակն այլ է Շիրակի բնակավայրերում, ուր հույները գրեթե նույնությամբ են փոխառել հայ բնակչության մեջ կենցաղավարող հարակաշի տիպը

4. Արորի և զութանի մանրամասն նկարագրությունը, դրանց առանձին մասերի ճշտումը տերմինների առանձնահատկությունների տեսանկյունից, և ընդհանրապես այդ ամենի շուրջ եղած գործողությունների համադրությունը տեղի հայերի կենցաղում հաստատված գործունեության հետ, հնարավորություն է տալիս վեր հանելու պատմամշակութային ավանդույթների առաջին հայացքից աննկատ այն արտահայտությունները, որոնք բնորոշ են եղել ներգաղթած հույներին բուն հայրենիքում: Արդյունք լինելով դարերի ընթացքում ձևավորված երկրագործական մշակույթի, դրանք պահպանվել են այլէթնիկ միջավայրի մշակույթի հիմնական բնագավառներից մեկի՝ վարող գործիքների համալիրին զուգահեռ:

Ժ.Բ.ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ
ՀԱԻ

ԱՐՑԱԽ-ՄԻՋԻՆ ԱՍԻԱ-ՇՈՒԼԱՎԵՐ՝ ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

1. Նշված տեղավայրերի հայությունը փաստորեն պատմական Արցախից է, որի առանձին հատվածներ, հիմնականում սկսած 18-րդ դ., գաղթել են Վրաստան, Միջին Ասիա և այլուր: Դաշտային հավաքչական աշխատանքի արդյունքները բանահյուսական-ազգագրական ավանդույթների համադրական ուսումնասիրման արժանահավատ ատաղձ են տալիս:

2. 1987թ. շարունակելով ուսումնասիրությունը՝ բանահավաքչությունն Արցախի Մարտակերտի շրջանում, եղել եմ ութ /թվով 48-րդում/ գյուղում, գրանցել բազմաժանր նյութ: Այդ տարվա արդյունքը նախորդ-